

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի  
 ՆԱՍԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂՔԱԿՑՈՒԹԻՒՆ  
 ՊԵՏԵ Կ ՈՒՂԵԼ ԿԱՍ  
 Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լուսարի  
 ԳԱՀԻՐԷ  
 Նամակատուի Թիւ 117  
 DIRECTION DU JOURNAL  
 NOR-OR  
 CAIRE, B. P. N° 117

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑՈՒՄԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Է Գ Ի Պ Տ Ո Ս
Գանիրէի համար Տարեկան,
» » Վեցամսեայ . . .
Շրջակայից » Տարեկան, 60
» » Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍՄՍՄԱՆԻ ՉԱՄԱՐ
Տարեկան . . . . . Ֆրանկ 18
Վեցամսեայ . . . . . » 10

ՌՈՒՍՒՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՉԱՄԱՐ
Տարեկան . . . . . Րուբլի 7
Վեցամսեայ . . . . . » 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԻԿ Ե  
 ԵՒ ԲՂՐԱՍԱՐԻ ԾԱԵՔԸ  
 Թերթին Վարչութեանը վրայ է:

Ձեռագիրներն ետ չեն գարձուիր:  
 Արտոնագր. Ժ. ՄԻՒՆԻԹԵԼ:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

«Միկարո»ի 13 յունիս ամսուան 166 թուակիր նա-  
 խաջողուածը, արտադրութիւն գրչին մեծանուն հայա-  
 սէր Անադոլ-Ֆրանսի, կենդանի նկար մը կրնայ համար-  
 ուիլ Հայաստանի մէջ այնքան անխղճօրէն գործուած  
 խժոճութիւններու, եւ անտարակոյս տաք-տաք ար-  
 ցունքներ պիտի խլէ ամեն զգայուն հայրենակիցներու  
 աչքերէ: Այս հաւատարմ կը ձեռնարկենք նոյնին թարգ-  
 մանութիւնը հրատարակելու, յուսարով թէ՛ եզրկտա-  
 հայերէն շատ մը քարտեր եւ անտարբեր հոգիներուն  
 վրայ բարեբար ազդեցութիւն մը պիտի թողու ան ու  
 պիտի զանոնք թելադրէ այսուհետեւ աւելի լըձօրէն  
 ու մայրենի խանդաղատանքով ու գուրգուրանքով փա-  
 րկու որբերուն հոգածութեան ամենատարբ գործին:

Տօգդ. Տիյեօն, Հայերուն շարդէն քիչ յե-  
 տոյ, էրզրում գտնուելով իմացաւ թէ Մօսթիկօ  
 անուն քուրդ մը, որ ինք միայն սպաննած էր  
 բազմաթիւ քրիստոնեաներ, նոր դատապար-  
 տուած էր կախաղանի: Այսքան արտակարգ  
 արկածի մը հանդիպող մարդ մը տեսնելու հե-  
 տաքքերը՝ վճարեց պահաշիջը եւ ներս մտաւ  
 բանաէն ուր պահուած էր Մօսթիկօ: Գուրտին  
 հպարտութիւնը կտորած չ'էր: Տօգդօրին պատ-  
 մեց սպաննութիւնները, որոնց չնորհիւ նուիրա-  
 գործուած էր ինք եւ հարստացած:

— Մենք, ըսաւ, թալլեցինք տներն ու ա-  
 լինք տարինք դրամը, գորգերը, արջաւուն ու  
 կիները: Ճամբորդներ ալ կողոպտեցինք:

Ու իր սրտին մէջ սոնքացաւ:  
 — Մեր նախնիները մեծ եղան ու յան-  
 դուզն, եւ մարդոց բերանները լի են անոնցմով:  
 Մենք կատարեցինք գործեր որ պիտի զարմա-  
 ցընէին տասներկու տէրութիւնները, եթէ լսէին:  
 Կը մաղթէր որ իր փառքը, Իսլամի մէջ  
 հաստատուած, տարածուէր անհաւատներուն  
 մէջ: Ու իր երեւակալութիւնը կը կրկնապատկէր  
 թիւր մեծ տէրութեանց: Եւրոպան, ըստ իրեն,  
 չունէր բաւական սկանչ, լսելու համար իր գոր-  
 ծերու պատմութիւնը:

Նահ ըսաւ:  
 — Գիւղեր կ'ոխեցինք ու սպաննեցինք մար-  
 դիկ, որոնք մեզ պիտի սպաննած ըլլային:  
 Հերոսի մը նրբի՛ն խօսք: Մօսթիկօյի ըմ-  
 բռնուումով, զարնողը զարնուելու կ'ենթարկուի եւ  
 այսպէս օրինաւոր ինքնապաշտպանութեան վի-  
 ճակի մէջ կը գտնուի:

Այս մտքով է որ Բ. Գուրը կրցաւ ըսել  
 թէ՛ Հայերը թուրքերուն դէմ ապստամբած են:  
 Տօգդ. Տիյեօն հարցոց քուրդին:

— Հայերը Ձեզի դիմադրեցին՝ երբ որ  
 դուք իրենց արջաւունքն ու կիները կը յափըչ-  
 տակէիք:  
 Մօսթիկօ պատասխանեց նոյնքան անկեղ-  
 ծօրէն որքան նրբամտօրէն:  
 Շատ անգամներ, բնաւ չ'դիմադրեցին: Այս  
 քրիստոնեայ ժողովուրդները ղէնք չ'ունէին  
 (իրենց ունենալ արդիւրուած էր) եւ լաւ գիտէին

որ եթէ զէնք ալ ունենային ու սպաննած ըլլա-  
 յին մերկներէն մէկ քանինները, իրենց համար  
 բան մը չպիտի արժէր ան. վասն զի թուրքերն  
 եկած ու վրէժ հանած պիտի ըլլային: Թուրքերը  
 կ'ատեն զանոնք ո՛չ թէ մենք: Գուրգերը դրամ  
 կուզեն լոկ ու աւար: Թուրքերը կուզեն անոնց  
 հողերն ու կեանքը միանգամայն:

— Շատ աղէկ, պատասխանեց Տօգդօրը,  
 բայց խիստ շատ բաներ ըրած էք:

Տեսնելով Հայերուն մէկ մարդասպանը կա-  
 խաղանի դատապարտուած, խիստ կանուխ կը  
 հետեցնէր թէ՛ իր այդ ոճիրն'ըն էին իր պա-  
 տիժին պատճառը:

— Ինչ մը ծայրահեղօրէն վարուած էք Հա-  
 յերուն հետ, շարունակեց. չափէն աւելի գիւղեր  
 աւերած էք ու չափէն աւելի տներ թալլած:  
 չափէն աւելի սպաննութիւն, բռնաբարութիւն  
 գործած էք. ու ի վերջոյ ինքզինքնիդ կախաղան  
 պիտի հանէք: Ճիշտ չէ՞ այս Մօսթիկօ լսեց այս  
 խօսքերն արհամարհոտ ժպիտով մը, եւ ուսերը  
 թօթուելով պատասխանեց:

— Ինչ որ կ'ըսէք, բնաւ վերաբերութիւն  
 չունի իմ բանտարկութեանս եւ դատապարտու-  
 թեանս հետ: Ես Հայերը կողոպտած ըլլալուս  
 համար չէ՛ որ կը պատժուիմ. ասի, ամենքս ալ  
 կ'ընենք:

Ու նորէն, քիչ անգամ կ'սպաննի, եթէ  
 ինծի չ'դիմադրէին:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՁԿՆՈՐԱԸ Բ.

Ծանրի գինեւուն-սրճարանը համաւաւոր էր, ոչ  
 այնքան գինիի եւ օղիի ազնուութեան, սուրճի անխառ-  
 նութեան, նարկիլիներու մաքրութեան համար, որքան  
 պետերուն (երկու ընկեր էին) հաճոյակատարութեան  
 պատճառաւ:

Մին Յոյն էր եւ միւսը Հայ:  
 Յոյնը՝ Ծանի, որ գինետան կալուածատէրն էր, իր  
 յաճախորդներուն ամեն յանձնարարութիւնները կը կա-  
 տարէր յօժարակամ: Ինք գիրուկ, կարմրայտ, բարի  
 մարդ մ'էր: Գրեւ կարգալ չէր գիտեր եւ յաճախորդի  
 մը հաշիւը կաւիճով կը նշանակէր. բայց մէկին սեղ  
 երկու գիծ չէր քաշեր՝ սխալմամբ: Կանոնաւորապէս  
 տարին անգամ մը, Ս. Գէորգի տօնին, կը պիտուէր:  
 Մնացեալ օրեր նարկիլին հաշուեսեղանին մարմարին  
 վրայ դրած եւ ինք ալ սեղանին ետեւ անցած օձաձեւ  
 ծխափողը կը քաշէր աչքերը քթթելով, ներս մտնող-  
 ներուն ժպտելով եւ ամենուն զուարճալի խօսքեր  
 ըսելով:

Հայ ընկերին անունը Պօղոս էր. յաճախորդները  
 Պօղիկ կը կոչէին: Շիլ աչքեր ունէր, նստած տեղը կը

մրափէր, աջ ձեռքին ըմպմանն եւ ցուցամտար կարա-  
 կնաձեւ բանալով կը խօսէր. չար չէր երեւեր, ոչ ալ  
 միամիտ էր: Ամեն իրիկուն յաճախորդներուն հետ մէկ  
 երկու գաւաթ կուլ կուտար:

Սոյն գինետան-սրճարանը մինչեւ ժամը տասնութիւն  
 գրեթէ ոչ ոք կ'երթար: Ամենէն աւելի ոգեւորեալ ա-  
 տենն էր մէկէն մինչեւ չորս, ուր սովորաբար կը գոցուէր:

Երկուստեքը ալ յազան էին. ամենամեծ վաճա-  
 ռականն ու կոչակարը, սեղանատունն ու ձկնորսը, ազ-  
 նուականն ու գունկիլը նոն սեղաններու վրայ կը կը-  
 թնէին իրարու յով, իբր ի գերեզմանի. օղիի եւ գինիի  
 սրուակներ կը սրարկէին, ընկերաբար գաւաթները ի-  
 րարու զարնելով. ձուկի, հակիթի, կարիկոտներու ա-  
 զանդերք կ'ուտէին ախորժակով. բիքէթ, վերտինա,  
 պէզիկ եւ այլն կը խաղային թիւերը բարձրաձայն նշա-  
 նակելով:

Մանաւանդ Հայերը մեծ համակրանք կը մտնէին  
 այս գինետանը, թերեւս այն պատճառաւ որ շատ ան-  
 գամ երբ Հաճի Աղան եկեղեցի երթալու ժամանակ չէր  
 ունենար, Ազգային ժողովը հոն կը գումարուէր: Սա  
 ալ կայ որ խել մը չ'չէին խնդրոց համար չէր արժիր  
 մինչեւ եկեղեցի յոգնիլ, որ բաւական հեռու էր...  
 Կինդ հարիւր քայլի չափ, եւ Հաճի Աղան շատ գէր-  
 թէեւ իր տնէն սրճարան գալու համար ստիպեալ էր  
 եկեղեցեայ առջեւէն անցնելու: Գործի մը կարգադրու-  
 թիւնը երբէք տաս վայրկեանէն աւելի տեւած չէր:

— Հաճի Աղան այնպէս որոշեց. ալ խօսք չուզեր.

ժամանակ չկայ. գլուխ մի՛ գաւցներ կրկնաք յարով...  
 Պօղիկ, Ծանի՛ վերտինա...:

Այն իրիկուն արճարան-գինետանը սոխրականէն  
 տեւիլ ամբոխալից էր նոր Բաքիւն, ամեն լիզուէ խօ-  
 սակցութիւնը կը լսուէին. յունարէն, գաղղիկէն, հա-  
 յերէն, տաճկերէն, արապերէն, իտալերէն, անգլիկէն,  
 ռուսերէն զրոյցք իրարու կը խառնուէին: Չէր, եւ  
 պատուհան գոցուած ըլլալով, օղը ըմպելեաց շնորհա-  
 ըով գլանիկներու եւ նարկիլիներու ծուխերով ծան-  
 րաբեռնած եւ յաճախորդները թանձր ամպի մը մէջ  
 սուզած էր: Անկիւն մը չորս հատ գլխարկակիր Մի-  
 սիլներ՝ օղիի գաւաթներ ի ձեռին, ցորենի եւ գարիի  
 առեւտուրին վրայ կը խօսէին. մինչդեռ անոնց սեղանին  
 կից սեղանի մը ծայրը մեծափող եւ կարմրայտ մարդ  
 մը — Հաճի Աղան — վերտինա կը խաղար իր չինոյ վեց  
 ընկերներով: Անդադար աստ անդ չըջապայով եւ ամեն  
 մէկուն մէջմէկ կատակարանութիւն ընող խոտալի մը  
 մերթ հաշուեսեղանին կը մօտենար եւ չրթանց մէջէն  
 ծխափողը վար առնելով՝ իբր մեզի ամբողջ հակիթ մը  
 վար կը գլորէր գաւաթ մը օղիի վրայէն: Հայ մը  
 որ միշտ գաւազանով կը պտըտէր եւ որ մատախապատ  
 օրեր թէ՛ գաւազան եւ թէ՛ անձրեւնոց կը կրէր, եւ ու-  
 բուն հետ ամեն ոք կը սիրէր ինչալ, մէկ կողմ քաշ-  
 ուած եւ ակնոցները գրած՝ տեսակաւոր լուտանքներ  
 արձակելով եւ նարկիլի քաշելով տապալի կը խաղար  
 խիստ պաղարիւն երիտասարդի մը հետ: Մի ուրիշ կողմ  
 պէզիկի հետամուտները սեղանի մը շուրջը բոլորուած  
 էին: Մէն մի վայրկեան «Պօղիկ» եւ «Ծանի» կը կան-

— Ահ, ըստ Տօգդօրը, Հայերը բան մը չեն ձեր գործին մէջ:

— Անոնք զիս մատնեցին, պատասխանեց բանտարկեալը, ու բռնուեցաւ: Բայց եթէ կախուիմ, պատճառն այն է որ ես թրքական թղթատարի մը վրայ յարձակած, գողցած, ու թուրք գնդապետի մը, որ հոս, էրզրում կը գտնուի, կինը բռնաբարած եմ: ո՛չ թէ Հայերը սպաննելուս համար, Հայերն ի՞նչ են որ ես իրենց պատճառաւ չարիք կրեմ:

Այս խօսքերը լսյա բերին Տօգդօրին մտքին մէջ, որ հասկցաւ թէ ինչու համար Մօթիկօ՝ կախաղանի դատապարտուած էր, փոխանակ ձի մը, և զէնքեր ընդունելու, ինչ որ թուրքի մէջ սովորական վարձատրութիւնն է սուրբ սպաննութեան:

Մօթիկօյի պատմութիւնը հրահանգիչ է, գաղափար մը կուտայ անցքերուն վրայ, որ տեղի ունեցան 1895 ին, Տրապիզոնի, Սիվաքի, Հայքալի, Ատանայի, Էնկիւրիի և Իլմիրի կուսակալութեանց մէջ, ուր 300,000 քրիստոնեաներ շարդուեցան: Մէկ քանիներն իրենք զիրենք պաշտպանեցին. ափ կ'ըսեմ անոնց ի գովեստ: Այն ժամանակները Տարսուսի մէկ սարին վրայ ամբարան, յաղթողաբար ես միջոցին կանոնաւոր թուրք բանակ մը և զէնքերը վար չը գրին մինչև որ պատուաբեր պայմաններ չ'կ'ընդհանրուին տէրութեանց զեպաններուն երաշխաւորութեանը տակ:

Բայց, գիւղերէն մեծագոյն մասին մէջ, անզէն Հայերը կոտորուեցան արջառի պէս: Ահա ինչ գէպքերը զոր կը յիշեցնեմ, հաստատուած են հաւաքական զեկուցագրով մը, Բ. Դրան տունի ֆրանսական, գերմանական, աստրիական, իտալական և ռուսական գեսպանները: Ուրեմն կուրելի է զանոնք նորէն յիշատակել առանց ահի խռովելու ժողովրդոց համաձայնութիւնը: Ոչ թէ վրէժխնդրութեան փափագէ, այլ գթութեան մտածումէ մղեալ կ'ընեմ հոս այս յիշատակութիւնը: Հայերուն վիճակը այսօր իսկ, ողբալի է: Մեր սրտերը պէտք է որ շարժին, և եթէ մենք թող տուինք որ մերթեմ հայրերը, գոնէ ոգնենք զաւակներուն: Տօրոսի և Արարատի որբերուն ի նպաստ վկայ մ'է Հ. Փ. Շարմիճանը. ահա՛ թէ ինչ կ'ըսէ այդ ուղղագրաւ և մեծասիրտ մարդը:

Մարդագոհներէն ի վեր, որոնք երկու տարուան մէջ կերան 300,000 նահատակ, հալածանքը կը շարունակէ, աղէտքն աննկարագրելի:

կ'ըլլայ, և սովը հեղձեցաւ կը տարածէ իր աւերումներն ու կ'ամառայնէ ամբողջ նահանգներ:

Ո՛հ, սովը, անշուշտ ուզուած է ան ու կալմակերպուած, ինչպէս եղած են շարքերը. արգիլուած է խելը Հայերուն իրենց աւերուած ու թալլուած գիւղերէն հեռանալ, ու դատապարտուած են մեռնիլ անօթութենէ ու զոհնալ հեռի օտարներուն կամ հիւպատոսներուն աչքերէն, որոնք կրնային կառավարութեանց տեղեկագրել ընտելութեանց ահաբեկի կացութիւնը:

Այս պայմաններու մէջ, որբերուն թիւը կ'աճի հետզհետէ, այն աստիճան որ հանրային իշխանութիւնները պարտաւորեցան ասոնցմով զբաղելու: Միայն մէկ նահանգի մէջ, 40,000 ի կը հաշուեն այս երկուսն ինչ՝ մանուկներուն թիւը, որոնք հարուստէ, հացէ, նեցուկէ զուրկ, ցուրտէ ու թշուառութենէ կը մեռնին, ա՛լ չուենինարով իսկ սարսփերուն համար ծախու առնուելու հեռանկարը. մարդկեղէն մարմինն վաճառատունը լիքն է: (Հ. Շարմիճան, գործ Արեւելեան վարժարանաց, թիւ 234):

(Շարունակելի)

### ԱՆՑԵԱԼԵՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԵՆ

Դեռ տարի մ'առաջ՝ Յուլիսի վերջերը, էլզպէթիէի պարտէզի հիւսիսային շրջափակի դիմաց, նորաշէն յարկի մը պատշգամբի որմին վրայ երկու եղբորալոյս լամբարներ՝ ծիծիւտ ստուեր մը կը սփռէին այդ բազմատամբ մոթի պողոտային երեսը, ու հետաքրքրութիւնը կը շարժէին օտար անցորդներուն, ցայգապահ ձկնորսներուն:

— Dis, Pierre, est-ce une maison du jeu? Entrons.

— Mais comment! malheureux, ne sais-tu pas que c'est le cercle arménien?

— Un cercle? Bravo, les Arméniens si avancés que ça!

Ի՞նչ փաղաքուշ վկայութիւն մեզ համար, օտարին բերնէն թռած:

Դժբաղդարար, այդ երկու լամբարները, մանաւանդ Յուլիս ամառն, կենդանութիւն չէին ներշնչեր պատշգամբէն ներս. ոգևորութեան տեղ՝ ներսը կը տեսնուէր միայն դամբանական ամառայնութիւն մը, ու լոյսերը, միշտ միեւնոյն լոյսերը, տարօրինակ բա՛ն, այլեւս նուազկող կը թուէին հոն յաճախող սակաւթիւ անդամներուն: Տխուր խորհրդանշանը թէ՛ հիւսնդ մը կար հոն, հոգեվարի մզլաւանջներէն խելայեղ պալարումներու մէջ տապալկող. փոխո՛ւ, թէ չէ ազգային՝ գէթ ազգօրուտ ու պատուաբեր հաստատութիւն մը, որ ամիսը չըտորած՝ ինը տարուան երկարակեաց փառաւոր գոյութենէն գոզցեա կորածամակ, վերջապէս պիտի փակէր իր բա՛նը:

— Այո՛ պատասխանեց Սերոր, առագաստը հինգած եւ ձեթը թափուած է, բայց ձեռքս դրամ չ'անցնիր որ պէտք եղածը ընեմ:

— Հը, ըրաւ գառնիկ, միշտ անանկ կ'ըսենք եւ ամեն իրիկուն գրպանինս հոս կը պարպենք:

— Չարմանալի ես, Գառնիկ, ըսաւ Սերոր, լսողը պիտի կարծէ թէ մեծ բան մը կը ծախենք, նայինք ի՞նչ է հոս ձգածդ ամեն օր:

— Բերանը բանալ մի՛ տար, ընդմիջեց Գառնիկ, եթէ ոչ դարձեալ իր քարոզներուն պոչէն կը բռնէ:

— Ճիշդը չեմ գիտեր, պատասխանեց Գառնիկ Սերորին, մինակ սա պիտիմ որ շատ անգամ հաց առնելու ստակ չեմ գտներ գրպաններուս մէջ:

— Հացը ի՞նչ պիտի ընես, միթէ իրիկունները հա՞ց կուտես:

— Խօսքս ինձի համար չէ:

— Հապա՛:

— Տուրը պղտիկներ կան, մայրերին կայ . . .

— Ես քեզի չ'ըմբօ՛, պողոտայ Գառնիկ, ահա նորէն քարոզ, եւ յետոյ Գառնիկին դառնալով, հա՛ անմիտ, հա՛ անպաշտ, ըսաւ. աստակ խօսքերը, աստակ միտքերը տէրտէրներուն, վարդապետներուն ձգէ՛, ամեն մարդ իր արհեստը թող ընէ. մենք ձկնորս ենք, ձուկ կը բռնենք կենսաբերինս հազար անգամ վտանգելով. պէտք է որ քիչ մ'ալ ուրախութիւն ընենք. մնացածին Աստուած զորմած է:

— Տուն կողմերը եթէ ուտելու բան մը չ'գտնեն, թող քնանան, ամբողջացուց Սերոր:

րեբար դանկը՝ կսկիծնիրու հրեոսակ մը կտակելով խուճը մ'աղնիւ երիտասարդներու, որոնք այդ երկար տարիներու շրջանին մէջ անդուլ զոհողութիւններով աշխատած էին անոր գոյութեան տեսականութեանը:

Մարդկային ճակատագրական օրէնք մ'ըլլալու է կարծես, որ այժեւ մը, չարիք մը, մեծ թէ փոքր զբժարողութիւն մը՝ մինչև հոս հառաչանք կը իլէ տառապող հողիներէ, հոն՝ գտնուին նկատի աբարածներ, կենսաբիապետներէն, այդ չարիքի մէջ որոնելու հաճոյք մը, սրտի պոռնակութիւն մը՝ աւելորդ ու ապարդիւն, լեզ արմար նախանձը, չար կիրքը վարկեան մը փայփայլու խօլ տնկելով:

Ի՞նչ ամօթ. պէ՞տք էր որ գտնուէին Հայեր, որոնք՝ հառաչի տեղ՝ անիւրէ հեղնութեամբ լսէին այդ զբաղողութեան բօթը: Ո՛ւր մնաց ազնուագիտականներու Գլխալը. ի՞նչ եղաւ երջանկայիշատակ Ընթերցասիրաց ընկերութիւնը. ե՛րբ պիտի կատարենք անոր վերջին հոգեոյն հանգուցեղոցը. — թունաբո՛յր բացաւ գանձութիւններ, քրքիջներով հեղձուցիկ, որ անա կը լսուէին հայ բերաններէ, արնպիտներու մանաւանդ որ սրճարաններու մէջ, հրապարակի վրայ, ազգասէր երեսնալու յաւակնութիւնը ունին:

Ի՞նչ փոյթ. որովհետեւ իրենց հաճելի եղած չէր, ոչ կուսակցական էր եւ ոչ ռամկավարական, աւելորդ եւ հետեւաբար ազգամիտ հաստատութիւն մ'էր որ կը վերնար մեջտեղէն:

Ի՞նչ պիտի ազգամիտ յանցանք, ի՞նչ մահացու մեղք գործած ըլլալու էր սակայն այդ ողբացեալ բա՛յց իսկապէս օգտակար ձեռնարկը, որ զբաղողաբար ընդհանուրին համակրանքը չ'լայելեց եւ՝ որ աւելի ցաւալին է, դատապարտելի անտարբերութեան մը զոհը եղաւ. կարծէ որ, համառօտ տեսութեամբ մը, անդրադառանք անոր շահեկան մատերուն վրայ, քիչ մ'անցեալէն սկսելով. հոն ալ պիտի գտնենք զժախտաբար ապացոյցները պերճախօս ու անթիւ՝ այն անարարութեան, անմիաբանութեան ու չար կիրքին, որ միշտ ու միշտ ամէն օգտակար ձեռնարկներ տապալկու ազգիւր չարեացը եղած են:

1882 տարեան յալարէն վերջ, երբ Արարի Փաշաի պատմութիւնը եւ ժամատարը այնքան աղիտաբեր եղան խեղճ Եգիպտոսին, Փարսոններու երկիրը՝ մեր ազգային տեսակէտով՝ տխուր երեւոյթ մը կը ներկայէր յայտնաբերուին Ազգային կեանքը կը հողովէր Պէն էլ Սըրի ի—այն ատեն խարխուլ վիճակի մէջ— անխառնակ զգեալի շուրջը. ազգային վարժարանը, որ հայութենէ աւելի ֆէլլահութիւն կը բուրդէր, Բարեգործական ընկերութեան հնօրեայ սրճարանը արեւելեան ոճով ու յած առաստաղով, հիմա բարեբաղդաբար եւրոպական Երիտասարդութիւն բառը անծանօթ էր մեզ, ու հայութիւն ըսելով՝ պէտք էր հասկնայինք կարգ մը ջոլ ամիրաներ, տղէտ, կէս-ֆէլլահացած, եւ խուճ մը խառնութեամբ հիշ կամ նոր օրերէ մնացած, որոնց ըով սեղանաւորութեան եւ խանգիթութեան նեղ հորիզոնէն անդին նայելու աչքեր կը պակսէին:

Եգիպտոս, այն ատեն թէպէտ աւելի վաճառաշահ՝ բայց ոչ այսօրուան չափ եւրոպական ու գեղեցիկաշէն՝ հեռաքնակ հայերէ նկատուած էր տնայէս ինչպէս մեզ համար՝ երեք տարի առաջ՝ Սուտանը, երկրային զենն մը, որովհետեւ հազուադէպ էր տեսնել Պոտոյ մամուլին մէջ կայտական տեղեկագրութիւններ,

չուէին բարձրաձայն, պարպուած գաւաթները լեցնելու համար:

Այդ խառնակութեան մէջ ամենէն աւելի պողոտայ եւ սրճարանը թնդացողներն երեք հոգի էին: Սոքա, արհեստի ձկնորս, գաւաթներ կը պարպէին, սեղանի մ'առջեւ նստած: Հակառակ աննպաստ եղանակին, առաւօտէն մինչև կէսօր ուղևորները ձուկերով լի քաշած եւ լաւ գնով ծախած էին, քաշի մը չափ պահելով օղիի մեզիկն համար:

Երեքն ալ ամուսնացած էին:

Այն միջոցին ուր ներսէս ու Սահակ ապակեղրան առնելու հասան, յաճախողներուն մի մասը ցրուած եւ մնացածներուն ուրախութիւնը վերջին ծայրի հասած էր: Ասոնց մէջ մի միայն քսանի չափ Հայ կ'երեւէր, ինչ որ մեծ բան մը չէ այն փոքր քաղաքին համար, ուր հազիւ եօթնասուսն տուն Հայ կը գտնուէր, ամենափոքր եկեղեցիով մը եւ առանց զարդի, վանաղի ժողովուրդը աղքատ էր . . .

— Հէ՛ Գառնիկ, կը պողոտա ձկնորսներէն մին իր մէկ ընկերին, ամուսն օր աստակ բաղդ ունենանք, որքա՛ն աղէկ կ'ըլլայ:

— Թող չարթ մ'այս կիրպիլ շարունակէ, աւելի չեմ ուզեր. պատասխանեց Գառնիկ:

— Ձեռքերինս բաւական դրամ կ'անցնի, ըսաւ երրորդը, որ Գառնիկ կը կոչուէր. ինձի նայէ՛ Սերոր, շարայարեց խօսքը առաջին ձկնորսին ուղղելով. քու նաւակդ նորոգուելու կարօտ է. այսօր քիչ մնաց բանդ պիտի բռնենք:

— Ես այնպէս չեմ ըսեր, պատասխանեց Գառնիկ եւ գլուխը ձեռքին, արմուկն ալ սեղանին վրայ յենելով սկսաւ անձռօնի երգ մը երգել:

Բայց զէմքէն յայտնի էր որ մոտանալութիւն մ'ունէր եւ երգը իբր վարագոյր կը գործածէր:

— Աս ի՞նչ է Գառնիկ, կ'երգո՞ս, հարցուց բարձրաձայն մեծափոր եւ կարմրադար մարդը, աչքերը իր թուրքերէն վեր առնելով պա՛ն մը:

— Ի՞նչ ընենք, Հաճի Աղա, պատասխանեց Գառնիկ, տեսակ մը ակնածութեամբ. դուք ձեր ոսկիները համբուլով, մենք ալ մեր յոյսերը երգելով ժամանակ կ'անցընենք: Բայց եթէ գլուխնիդ ցաւուցի, կը լսեմ Եթէ հրաման իսկ ընէք որ չ'լսեմ, չեմ խմեր:

— Զէ՛ չէ՛, խմէ՛ եւ ուրախաբեր. Պօղի՛կ սրուակ մը օղի տո՛ւր հոն. Գառնիկ, Սերոր, Գառնիկ, վազը անպատճառ աղւոր եւ մեծ ձուկ մը կ'ուզեմ. հրաւիրեալներ ունիմ:

— Գլխուսուս վրայ, Հաճի Աղա, գոչեցին երեք ձկնորսները մէկ բերան, եւ նոր եկած սրուակը պարպելու սկսան:

Մեծափոր եւ կարմրադար մարդը ուղղութիւնը վերստին դարձուց իր վերջնական:

— Հա՛ աղաք, ըսաւ Գառնիկ, ի՞նչ կ'ըսէք այս օրին:

— Կ'ըսեմ թէ բուն իսկ օղի խմելու օր է, խոնաւութենէ չ'ջնատուելու համար, պատասխանեց Սերոր:

Գառնիկ ձեղունը կը գոռօր. դէմքին վրայ բարկութեան եւ արգաստութեան խառնուրդի մը հոգը կը նշմարուէր:

(Շարունակելի)

### Ա. ՉԳ ԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

կլիմային, գաղութին եւ առեւտուրին վրայ, քիչ մ'ամեն տեսակէն. չոր քերականութիւն մը գիտցողը՝ գիտուն մ'էր եւ պարզ յօգուածագիր մը՝ օրուան հերոսը:

Տարիներու հոլովման հետ, սակայն, ժամանակը, դարուն յառաջգիմական ձգտումները ու նորեկ հայերու հոսանքը կուգային մեր մէջ ներգործել իրենց փրկարար ազդեցութիւնը: Արտասահմանի մէջ, Մարտի, յառաջընթաց կարապետ, կ'սկսուէր Արմենիայի հրատարակութիւնը: Ո՛հ որքան անուշաբոյր, բայց խաբուսիկ յոյսեր ներշնչելու կուգար ան մեզ, որուն հետեւանօր յանկարծ խրտուում մը տեսնուեցաւ հոս այլ Սուրբ մ'ազգայիններ, 1886 ո՛ր մի շնորհաց ամիս, կը ձեռնարկէին Յառաջընթացի Ընկերութեան մը, յեղափոխական գործային ծառայելու նպատակաւ: Ատեն մ'եղաւ որ ամբողջ գաղթականութիւնը, արտասահմանի շարժումներէն մագնիսացած, կը հետաքրքրուէր Յառաջընթացիով. հանգանակութիւններ կ'ըլլուէին, ժողովներ ու ճառասուտութիւններ, թատրոններ կը տրուէին, ամենափայլուն՝ մասնաւորապէս Վարդանանց տոնախմբութեան օրը, ուրոնցմէ՝ մեր պատանեկան երազուն յիշատակներուն մէջ՝ անջնջելի պիտի մնան զերասանուհի Սիրանոյշէ թողուած առաջին զեւթական տպագրութիւնները... Ու խանդավառութիւնը ու ազգային ես ու զեւթու մը իր զենիթին կը հասնէր ամէն տարի՝ Մայիս 24ին, երբ փաշաներու հովանաւորութեան տակ, Սաղէ մի Սրբազան տարազիրին օրով, Բարեգործական ընկերութեան սրճարանին մէջ փառաւորապէս կը տօնախմբուէր Սահմանադրութեան տարեգարձը, հիմա գծադրաբար մոռեալ տառ մնացած: Մոզական երեւոյթ մը կ'առնէր այդ օր՝ գիշերը՝ Հայոց սրճարանը, լոյսերով փողփողուն, մշտազալար ծառուղիներու ստուերներու տակ հազար ու մէկ գիշերներէ բան մը փոխ առած: Գարեջուրը տաքացած է ամին զուխներ, որ հուրը կը պահեն զեռ. Բամբ որոտան, Ո՛հ ի՛նչ անուշ, Մայր-Արարիք, զինուորական նուազածութեան զուգադաշնակ, կը բռնկեցնեն հայրենասիրութեան նորարածարձ աւելնը մինչչեւ դուրսը՝ երկններնազ հրթիռներ, մէկ մէկ ասուպ, կը սլանային դէպ ի վեր, օդին մէջ, ցոյց տալով աշխարհին՝ թէ Հայը մոռցուած տարր մը ըլլալու չէ, ազգ մը որ անհուն իղձեր ունի եւ որ գիտէ արժանաւորապէս տօնել իր կենդանի օրերէն մին:

Ա՛հ՝ դուն յուսախաբութիւն: Ո՛վ կարող էր մակարերել թէ այդ խանդավառութիւնը ի՛նչպիսի աղեճակի դառնութիւններ վերապահած էր մեզ, եւ թէ մեր յոյսերը ի՛նչպէս մարելու սահմանուած, նման այն հրախաղութեան հանդէսներուն որ պահ մը երազել տուին մեզ ու օդին մէջ ցնդեցան: Պիտի չունենանք այլեւս առիթը վայելելու այդպիսի հանգիստաւոր տօնախմբութիւններ, գէթ վարկեան մը հոն փնտռելու մեր դառնութիւններու սպեղանին ու լսելու ազգային երգեր՝ զոր շատ քիչ անգամ լսելու բարեբաղդութիւնը ունեցած ենք այն յիշատակելի երջանիկ օրերէն ի վեր, այն ալ ո՛ր գիտէ ինչ թուլ, անզոյն ու անհամ եղանակաւ:

Ո՛ր ես դու, Սրբազան հուր Հայրենիքի. Ո՛հ, ինչպէ՞ս յուզեցիր ու խանդավառեցիր մեզ, այնքան շուտ լքանելու ու վհատեցնելու քեզ պաշտողները, որ քեզի համար կը տառապին, ու կրկին քեզմէ կ'ակնկալեն իրենց փրկութեան երկնաձիգ յոյսը...

Շարունակելի

### ԿՈՒԶԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ ՈՍԿԻ

ԿՈԹԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

### ԺՍՄՍՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ՂԾ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷ՛Ք

### ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ՛ ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազիւրաւատալի գններէն սկսելով մինչեւ ազամանդազարդ: Արծաթ ժամացոյցներ 50 դրուէն սկսեալ, նիքէլ ուրմոնթուած ժամացոյցներ 22 դրուէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շրջթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քօնսօրի բաղմազան բանասկզներ:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, դրասեղանի յատուկ, 10 Ղրուէն անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ըմանին:

Ուրեմն գիմեցէ՛ք ուղղակի:

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

### Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՉԷՄՊԸՐԼԷՆ. — Լոնտոնայէ քաղաքահայտէ հեռագիր մը կը յայտնէ թէ Անգլիոյ պատերազմական գործերու նախարարը Լորտ Լէնտոնտուն, պատերազմը վերջանալուն, պիտի հրաժարի: Զրոյց կայ թէ՛ Չէմպըրլէն պիտի յաջորդէ անոր:

Այս առթիւ, խորհրդարանի անդամներէն Գիդապետ Ուէլլի հրապարակաւ կարծիք յայտնած է թէ՛ Չէմպըրլէն պիտի ըլլայ պատերազմական գործերու տիպար նախարարը, որ պիտի կրնայ, իր կորովով, կամքի ուժով ու անվստիքեամբ, իրագործել արմատական բարեփոխումներ, որոնց պէտքը կ'զգացուի թրանսվալի պատերազմէն ի վեր:

— Կ. ՊՈՒՍԷՆ կը գրեն թէ՛ Սուլթանը հրամայած է պայմանագրութիւն մը ստորագրել Գրուսի տան հետ, սպառազինելու համար ձէնօվրայի մէջ նորոգուած 8 թրքական զրահաւորները. թէեւ Արմադրօնի ռ Մաքսիմի տուները՝ գերմանականէն 30 0/0 աւելի վար գին մ'առաջարկած են:

— Տեղական թերթ մը կը պատմէ թէ Սուլթանը Լոնտոնայի Օսմ. Դեսպան Գոթթաբի բաշային հրամայած է ինքզինք տրամադրութեան տակը գնել Ն. Բ. Խտիվին, որչափ առեն որ նորին Բարձրութիւնը Լոնտոնա մնայ:

— ԹԻՐԱՆՎԱԼԻ ՄԷՉ. — Զինական լուրերն այն աստիճան ուշագրաւ են որ հեռագիրները բողբոլին զանց կ'ընեն թրանսվալի գէպերը: Բիւթէր կ'իմացնէ միայն թէ՛ զօրավար Բէտովէր Պուլլը 2 միլոն յառաջացած է երկաթուղիին հիւսիս-արեւմտեան կողմէն:

Շիտակը, եթէ Պուլլը այսպէս ամիսը 2 միլոն յառաջանայ, զեռ շատ ժամանակ պէտք է Բրէզօրիա հասնելու. պիտի հասնի՞ արդեօք:

— Բէքինի մէջ կացութիւնը տաքնապալից է. Զինական զնդերը, թուով 30000, Թունկ-Մու-Սիանկի հրամանատարութեան տակ, քաղաքին դրան առջև համախմբուած են, շատ մը թնդանօթներով:

Խրամատներ կը պեղեն օգնութեան համող զօրքերուն խաղաքն արգիլելու համար:

Թնդանօթները շտկուած են անգլիական, ամերիկեան ու ճաբոնական պաշտօնատանց վրայ: Միւս կողմէն, Միացեալ Նահանգաց, Ճաբոնի եւ Ռուսիոյ զեւթանները սուրհանդակներ զրկեցին Դիէն-Չին, իւրաքանչիւր տէրութեանէ 2000ական օժանդակ զօրք խնդրելու համար:

### Հ Ե Ռ Ա Ք Ի Ր Ն Ե Ր

ԼՈՆՏՐԱ 21 Յունիս. — Մովակալ Պրես յայտը Թաքուէ կը հեռագրէ Շէֆուի ճամբով թէ՛ 7 օր կայ որ ծովակալ Սըր Էտուարտ Հ. Սէյմուրի մասին լուր մ'առնուած չէ. հինգ օրէ ի վեր ալ Դիէն-Չինէ լուր չկայ. դաշնակիցները Թաքուէի եւ Թուրքուլի բերդերը գրաւած են ապահովապէս: Ատոնց ոչմերը պիտի յառաջանան Դիէն-Չինի օգնութեան, երբ որ քաւականաչափ

օգնական զօրքեր հասնին. կը կարծուի թէ՛ շարունակ կը պատերազմին Դիէն-Չինի շուրջը. այս քաղաքի մէջ 3000 մարդու չափ պահակազօրք ունինք:

Օտար ծովակալները յայտարարեցին փոխարքաներուն եւ չինական միւս իշխանութեանց որ դաշնակիցները պիտու զօրութիւն պիտի գործածեն միայն Պօքսթըններու եւ ամեն անոնց զէճ որոնք չպիտի թոթուն որ իրենք Բէքինի վրայ երթան իրենց հայրենակիցները ազատելու համար:

Անգլիական Ինիս եւ ձիսօ մարտամուտերը հրաման ստացան Զին մեկնելու:

Ս. ԲէյրՍՊՈՒՐԿ 21 Յունիս. — Արտաքին Գործերու նախարարը, Կոմս Մուրալիէֆ մեռաւ:

ՈՒՍԵՆԿԻՐԸ 21 Յունիս. — Ընտրողական ժողովոյ մէջ Մ. Մաքքինիլի նախագահութեան եւ Մ. Բուսվէլու գեր-նախագահութեան ընտրելի առաջարկուեցան միաձայնութեամբ:

ՊԷՐԼԻՆ 22 Յունիս. — Մովակալ Գամբի-Գամբիֆ 21ին կը հեռագրէ Շէֆուէ որ Զինացիք կը ուրակոծեն Դիէն-Չինը:

ՓԱՐԻՉ. — 21 Յունիս. — Ն. Բ. Ստիվը հիւանդ հասաւ Բօր-Վիթթորիա. «Օսպորն»ի մէջ մնաց. կոկորդի բորբոքման (diphtherie) պատանիչը ունի եղեր. Կոմս Մուրալիէֆ յանկարծամահ եղաւ:

Թաքուի ծովակալները կ'ապասխն օժանդակ զօրքերու, որպէսզի Դիէն-Չինի օգնութեան վազեն:

Սորհրդարանի մէջ Մ. Պրօսթրիք յայտարարեց որ 7 օրէ ի վեր լուր մ'առած չէ ծովակալ Սէյմուրի մասին:

ԵՕԳՕՀԱՄԱ 21 Յունիս. — Զրոյց կը պատի թէ՛ Բէքինի եւրոպական զեւթանները շարժուած են ու ծովակալ Սէյմուր մեռած: Այս զրոյցը մեծ յուզում ձգեց հոս, բայց զեռ ստուգութեան կարօտ է: Ծառօնի թերթերը կը սնդեն որ կառավարութիւնը ձեռք առնէ ազգու միջոցներ, տէրութեանց հետ կամ առանձին:

### ՍԱՂՄՈՍ ՀԱՅՎԱԿԱՆ

ՇՈՒՐՁ ԶԳԵՐՆԶՊԱՆԱՓ

«Քանզի, դու մեզ մոռցար Հայրիկ, Ասուած՝ ալ եեզ մոռցաւ Հայրիկ.»

Ահա այս էր այն սեւ աւուր եղերերը՝ զոր կ'երգէին ծանր ու ճնշող ու մթնոլորտի մը մէջ, աղբերկ ըլլալու չափ ուժգին եւ սիրտ մորմոքելու աստիճան աղու եւ տիրապին Զէլ տեսներ ո՛չ քնարը, ո՛չ երգիչը՝ որոց միջոցաւ կ'երգուէր այս յոյժ խորհրդաւոր երգը, վանդ խեղճոյն օղբ զոր հազիւ կրնայի շնչել, աշխարհ խիտ, ցած ու թանձր էր որ հողիւ մի քարքնկէց հորիզոն կը պարզէր տեսողութեանս առջեւ. եւ աչացս անկարելի էր զօրել տեսնելու թէ ինչքը կը շրջապատեն զիս. ուստի բոլոր ուշա տուի կրկին լսելու, իմանալու թէ՛ ի՛նչ էր եւ ինչո՞ւ եր այդ միակ երգը Բանզի մեզ մոռցար Հայրիկ, Ասուած ալ եեզ մոռցաւ Հայրիկ, եւ անա տեսայ որ թուխ կամ սեւ գունով թոռուներ, ա՛նգլ թէ՛ կ'առնէ, չկարողացայ որոշել, երբ կ'ազգայ սեղմ սեղմ հորիզոնի մը շրջանին մէջ, իբր հինաւուրց սգաւոր ողբերգակ թուշուր ու շրջելով՝ զեռ ինձ անձանօթ, բայց երեւի նուիրական կորստեան, յոյժ թանկագին մի կորստեան շուրջ, որուն վերջին թոշակը կը վճարէին, դա՛ն թոշակ. ամբիժ կամ հոգեհանգիստ կը կատարէին գրեթէ խնամող. գրեթէ շրջապատող երկիրը պայծառացնող էակներու հոգեոյն համար, հոգիներ, որք այլ եւս չ'կային. որոց մարմինները գերեզման ալ չ'ունէին. ու՛ր տապանաքար կամ արձանագի՛ր. օղ մը միայն. օղ սեւ խաւարին եւ շօշափելի լինելու աստիճան խիտ եւ հեղձուցիչ. բայց հաւատարիմ թոռուներ՝ իրենց բնագրի՛ն թէ իմացակալութիւն հետեւանքով չէին վախճաւած հեռաւոր մարդաշատ ու մարգապատ երկրի մը վայելքն ունենալու համար, լքանել իրենց բնիկ երկիրը. եւ ո՛չ միայն այդչափ, այլ եւ անհաղորդ մուտաներու, անմաղթանք թողուածներու իբր երախտագէտ բարեբարեակներ, գանձ մը սրտածմբիկ, աղելու մը խորհրդաւոր կ'երգէին ի վճար. նախընտրած էին գերեզմանական կեանքը:

Ներքին յուզմանս ամբողջունք եւ արտաքին ճնշումն սարսաղեղեցիկ տեսարանին՝ պահ մը մոռցողին ինձ թուշուր խորհրդաւոր երգին խորը, միտքը թափանցելու գիտաւորութիւնս ու կը փնտռէին եւլ մը, անցը մը հեռանալու այդ մահահոտ վայրէջն. ու բարձր ձայնով գոչեցի «Ո՛հ, Ո՛ տայր ինձ գթեաւ որպէս արծուի, զի թոշէի, վերանայի եւ հեռացեալ դադարէին յանապատի» ու կը յառաջէի, գրեթէ խարխափելով. սակայն զէպ մը. անակնկալ մը կասեցուց զիս. վե՛հ ձայն մը, որ կարծես ո՛չ թէ կոկորդէ: ալ սրտէ կը ժայթքէր, իրաւունքէ զրք-

կուած. յոյսերէ լքուած՝ ճարտասանի շեշտով պատասխանեց ինձ. — Ո՛վ մահկանացու, մոյր որ ու շուար. ինչո՞ւ եկար վրդովելու քուն մը, հանգիստ մը, որ ձեռք բերուած է այն ամեն տեսակ անհնարին զոհողութիւններով, զորս մարդ հազիւ կարող եղած լինի որ իցէ տեղ կամ փամանակ ընել, ու ինչո՞ւ յիշեցիր Դաւթի այդ խօսքը, զոր իբր կեանքի շափ փամանակ առջ գիշերային մթութեան մէջ, աշխարհահոգեակ Ս, կարապետի վանուց Պուռնեռէն անկեղծ ու բոլորանուէր ազօթքի մը եղբակացութեան նման յերկինս թռած էր այժմեան Տ. խուր Ծերունիին քերնէն, որուն գէմ այսօր Հայ աշխարհի կուռնկներու մի փոքրիկ երանն իւր հետու, այլ երկնքի մօտ միջավայրէն, ուր խանձարուրը պատանք եզաւ Հայ մանկան, կը կրկնէ, իւր գլուխն, կտուցը երկարելով միշտ գէպի Մասիս, գէպի Լուսաւորչայ գահն ու առ նորա գահակալը Այս աշխարհը, ուր կը գտնուինք, Տարօնն է, նախկին Հայոց փառքը, երբեմնի մեր կեանքը, իսկ այսօր մեր գերեզմանը, որուն մէջ կիսակենդան գեռ շատեր կան ինձ նման անձանթ՝ աւերածի որչափութեան.

Իսկ այս ծերունին, հին վառ ու խիզախ հայրենասէրը, այլ իսկապէս մենամուրը, որ վաճը Հայաստանի եւ իւր անձը Հայութեան հաւասար կը հաշուէ, շատ առաջ, տարիներ առաջ, գրեթէ իբր քառորդ դար առաջ լսեց այդ երգը, ոչ թէ թաշտակներէ, ոչ թէ սեւ աւերակ ու անտառաքանակ երկրի մէջ, ոչ յոյսերու իսպառ կորուստով ժամանակի եւ յուսահատութեան հանդէպ, այլ, լսէ՛, լսէ՛ ո՛վ իմ խեղճ, հալածեալ, հարազատ Հայ եղբայր, այդ երգը լսեց նա այն ժամանակ, երբ ազգային ատելութեան փորձանքներէն աղատուած, արծուի թևերով թռչելով, վերանալով կ'երթար, ինչպէս ինք ազօթած ու Աստուած լսած էր. դադար ու հանգիստ տանել Մշտ վանքի պարզ ու անշուք աթոռի փոխարէն, աւելի մեծ ու փայլուն, բարձր բայց փշալից աթոռի մը վրայ, ուր սակայն կար մեծ միջոց մեր մեծ հայրենասէրին համար. եթէ երբէք նա ուզէր իբր հովիւ քաջ ղնել գանձն իւր ոչխարաց համար . . . Բայց աւա՛ղ. . . այն ժամանակ, այդ պաշտօնական գնացքի միջոցին, ապագայ Հայրապետը լսեց այդ երգը մարդոց բերէ, մանուկներու, հարսներու եւ աղջիկներէ բերնէ, որք գոնէ կիսամերկ էին. այդ երգը լսեց նա քիչ շատ արտերու եւ հողերու տէր Հայերու բերնէ, երբ գեռ փրկուածն յոյսեր կային հայութեան համար. այդ երգը, եթէ ձեռքէ դու մեզ մոռնաս Հայրի՛կ, Աստուած ալ քեզ մոռնայ Հայրի՛կ. լսեց Վասպուրական Արծիւն ու արտասուեց, եւ խոստացաւ, Աւագ-Աղբիւր գիւղի ժողովուրդին, «Եթէ ես քեզ մոռնամ, Աստուած ալ զիս մոռնայ . . . »

Կերաւ նոցա ազն ու հազը, խմեց Լուս-Աղբիւրի վճիտ ջուրը, զորս տունին գիւղացիք այն զգացուցումով որ մարդ իւր ազօթքը կուտայ Աստուծոյ եւ Հայրիկ գնաց, գնաց, գնաց . . . եւ մենք հոս կը սպասենք իբր քրիստոնէայ, թէ ե՛րբ պիտի լինի կատարուին Աստուած ի քարանցս . . . յարուցանէ զորդիս . . . » ու ինձ խօսող ձայնն ա՛լ կարեցաւ. գնաց, եւ մնացի միայնակ . . .

Մ. ՀԱՅՅՈՒՆԻ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԸ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՅ ՄԷԿ ՆԻՍՏԸ ԶԱՒԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ

ՏԵՍԻԼ Զ.

ՍԱՐԳԻՍ. դրան մեզ երեւցալով. — Բարձր իրիկուն Պ. Պէգրեմեանին . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Օ՛հ օ՛հ . . . Աստուծոյ բարին . . . հրամայեցք. ձեռք բարեկամ ինչպէս էք, աղէկ էք:

ՍԱՐԳԻՍ. — Պատուական . . . դուք ինչպէս էք, լաւ էք անշուշտ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Փօ՛րք Աստուծոյ . . . աս չպիտի պայիք . . .

ՍԱՐԳԻՍ. — Այո՛ . . . բայց որովհետեւ այս երեկոյեան նիստը շատ կարեւոր է, վաղուան թողուցի՛ ուր որ պէտք էր երթալի . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Աղէկ ըրիք, եղբայր . . . Ընդհ. ժողովոյ Դիւանը հաշիւ կուղէ, տանք տէ սա պէտքայէն ազատինք:

ՍԱՐԳԻՍ. — Այնպէս է . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Շնորհակալութիւն կը յայտնեմ՝ ձեզի ձեր զրկած անուակ մը կազին համար:

ՍԱՐԳԻՍ. — Շնորհակալութիւն յայտնելու տեղի չկայ. պարզապէս իմ պարտաւորութիւնս էր որ ըրի: Բայց ո՛ւր են պարտները, դեռ չե՞ն եկած . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Թամնա՛մ. . . ասանկ շո՛ւտ պիտի գային . . . Ատենապետը հոս, իր տունն է . . . ձայնը լսեցի քիչ մը առաջ . . . մօրը հետ կսիւ կ'ընէր, ինչ կ'ընէր . . . իսկ Ատենապետին ու Գահակալին, Աստուած հետու պահէ. ո՛վ գիտէ, ո՛ւր են հիմա:

ՍԱՐԳԻՍ. — Ատենապետը ո՛չ . . . բայց Գահակալին պիտի տարակոյս չունիմ որ հմայքի ներքեւ է այժմ . . . երբեքն ու ծորրալը պիտի տեսնենք, եթէ գայ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Հա՛, հա՛, հա՛, ըսել է վստահ չէք որ պիտի գայ . . .

ՍԱՐԳԻՍ. — Կը տարակուսիմ . . . բայց ո՛չ, կուգայ . . . ուր որ ալ լինի չ'մոռնար ընկերութիւնը, անով կը պարծի միշտ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Անոր աշխին պօլ պօլ կը խմէ հիմա . . .

ՍԱՐԳԻՍ. — Այո՛ . . . բայց աւելի հա՛ղէտներու փամանակ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Հա՛, հա՛, հա՛ . . . ատ ինչ աղէկ նկատեմ էք . . . հանդէս ունինք ըսելով կը խմէ ու կը խմէ . . . չի ալ ձաթիւր աղբար . . . դաթի մայրիք բան մը . . . ո՛ր ալ կը լսեցնէ . . . Քեզի բան մը ըսե՛մ . . . Ատենապետին ալ քիչ բարի պտուղ չէ հա՛հա՛հա՛ . . . չիմնր ամնա . . .

ՍԱՐԳԻՍ. — Կը հասկնամ . . . արդէն այդ աթիւն է որ արձանագրութիւններն ընկու փամանակ չունի: Դրան ձայնը կը լսուին. եկան, կարծեմ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ելելով դեպ ի դուռը երթալով. Այո՛ կարծեմ . . .

ՅՈՎՍԷՓ. դրան մեզ Սերուհիին ձեռք բարեկամ ինչպէս էք, Տիկին, աղէկ էք . . .

ՍՐՐՈՒՀԻ. — Շնորհակալ եմ Պ. Պաղտասարեան . . . ողջ ըլլաք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. դրան մօտեցած. Անչէն ու սահլէն, (Բարի, հազար բարի):

ՏԵՍԻԼ Է.

ՅՈՎՍԷՓ. ուրախ զուարթ ներս մտնելով. բարի իրիկուն ձեզ . . . կարգաւ երկուրիմ ձեռքեր կը բօրուէ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՍԱՐԳԻՍ. — Աստուծոյ բարին . . .

ՅՈՎՍԷՓ. — Ինչպէս էք, նայինք . . .

ՍԱՐԳԻՍ. — Պատուական . . .

ՅՈՎՍԷՓ. — Դուն միշտ պատուական ես արդէն . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Դուն ալ միշտ սքանչելի . . .

ՅՈՎՍԷՓ. — Հապա դո՛ւն . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Զիս մի՛ հարցնէք . . . պատուականին ու սքանչելիին հետ գործ չունիմ . . .

ՍԱՐԳԻՍ. — Ո՛չ . . . դուք մեզմէ երջանիկ էք . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Կարգուած եմ տէի . . .

ՍԱՐԳԻՍ. — Այո՛ . . . այդ մեծ երջանկութիւն մ'է:

ՅՈՎՍԷՓ. — Դուն ինչո՞ւ չես կարգուելու ուրեմն:

ՍԱՐԳԻՍ. ձեռքը ձեռքերուն տանելով. իմ փամանակս անցաւ այլեւս . . . աղջիկները ձեզի պէս թարմերը կը սիրեն . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Զէ՛ ձօ խեղ . . . կան որ քեւամիլները կը սիրեն:

ՍԱՐԳԻՍ. — Մի՛ հաւատաք . . .

ՅՈՎՍԷՓ. — Դուն ալ որքեւայի մը ա՛մ . . .

ՍԱՐԳԻՍ. — Անտք ալ չեն հաւնիր զիս . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Կուզէք նէ հատ մը գտնեմ ձեզի, Պ. Փէշիվանեան . . . սանկ կլոր մըր ալ բան մ'է . . .

ՅՈՎՍԷՓ. — Ըսել է որ պատրաստ ունիս, Պէգրեմեան . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Զ'գիտե՛ք . . . կարգուած մարդուն դուռը շատ կ'երթան կուզան անանկները . . .

ՍԱՐԳԻՍ. — Աղջիկներ չե՞ն գար . . .

ՅՈՎՍԷՓ. — Վա՛յ . . . միտքդ աղջիկներուն է . . .

ՍԱՐԳԻՍ. — Կէծելի իրթիյարանազ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Հոգ մի՛ ընիր անանկ է նէ անոնցմէ ալ կայ . . .

ՅՈՎՍԷՓ. — Կարծեմ հոտ առած են ատոնք, Պէգրեմեան . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Անանկ ըլլալու է . . . գիտեն որ ժողովին հոս կ'ընենք . . . հիչ ալ չեն պակսիր սակէ . . .

Le gérant, J. MUNIER.

ՍԱՐԳԻՍ. — Բայց դեռ չ'տեսանք ատոնք . . .  
ՅՈՎՍԷՓ. — Սա ինքզինքը ձեր անուանողին նայէ՛ Պէգրեմեան . . .  
ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Հա՛, հա՛ . . . իրաւ է որ մարդ ինչ խտար տարիքը անէ, անխտար խուտորովի կըլլայ: Դրսի դուռը կը զարնուի:  
(Շարունակելի)

Ա. Զ. Դ.

Գալտեան Երկսեռ Վարժարանի ուսանողաց տարեկան հարցաքննութիւնք կը սկսին յառաջիկայ երկուշաբթի, 25 յունիս, և կը տևեն մինչև 30, շաբաթ:  
Տնօրինութիւն  
Գալտեան Վարժարանի

Լսարան Ընթերցատան Պատ. Գործ. Ժողովով Դիւանը կը փութայ ծանուցանել ընկերութեան արգոյ անդամներուն որ հաճին իրենց յետնեալ ամսավճարները բերել վճարել ընկերութեան կեդրոնատեղին, որ է «Նոր Օր» ի խմբագրատունը, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 խանութը:

Դիւանը կը խնդրէ որ արգոյ ընկերները փութացնեն իրենց վճարումները, որպէս զի ձայն ունենան Ընդհ. Ժողովոյ յառաջիկայ նիստին մէջ, որ տեղի պիտի ունենայ Գործ. Ժողովոյ ութամսեայ հաշուեկէիւրը քննելու և ուրիշ կարևոր խնդիրներու վրայ խորհրդակցութիւններ կատարելու համար:

ԱՄԱՆԴԱՏԱՐ (ԷՄԱՆԷԹՅ)

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷՆ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԳ, ԳԱՀԻՐԷ և Պոլսոյ մուսուլմանաթի խմբուրի մը Թիւ 84

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղչէ Գարու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը բնակող և երկար փամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախողաց վստահութիւնը զբաւող եմանէքթի Աբրահամ էֆ. Պալմայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետեւ Կ. Պոլսէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլիս զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին:

Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր նախորդ թուոյ հրատարակուած «Անձուկ» վերնագրով ոտանաւորին մէջ հետեւեալ վրիպակները սարգած են:

Table with 2 columns: Page number and Name. Includes entries like Սիլալ, Տող 3, 15, 28 and names like Ուզիդ, Երկրի, գեղուհի.

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: Year (1900-1909) and values. Values range from 6566 to 9664.

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրուր